չոգենաւ գնացին այցելութեան, եւ միջոց մի այս այցելութիւնները ընդունելէն վերի, ժամը 12 ին փառաւոր հանդէսով ցամաք ելաւ ; ուր կ'սպասէին քաղաքին բնակիչներուն մեծ մասը խուռն բազմութեամբ, նոյնպէս վերոյ յիշեալ երկ տեսակ զօրաց խումբերը հանդերձ նուագարաններով : Եւ նոյն միջոցին 21 հատ ռումբ արձակուեցաւ ի պատիւ յիշեալ կառավարչին, և անոր անմիջապէս կառքը հեծնալով ուղղակի քաղաքին մութասարրըֆ փաշային պալատը այցելութիւն մի ընելէն վերջը, Դամասկոսի վսեմ. կուսակալին պալատը գնաց իջաւ » :

## ՊԱՏԻԺ ԲԱՄԲԱՍՈՂԻՆ

Պարոն Բուրդէլը յաւուր միում գնայր զօրօք ի Ճանապարհ. և քահանայ մի հանդիպեցաւ ի Ճանապարհին, իջեալ ի ձիոյն զօրօքն հանդերձ և համբուրեցին զաջ քահանային : Եւ նայիպն Ալբանի անուն տրտնջեաց պարոնին (զքահանայէն), և պարոնն ծանուցանել պատուէր ետ (քահանային) զի մի կնքեսցեն և թաղեսցեն զընտանիս նայիպին : Սորա որդին և ոչ թաղէին. եկն առ պարոնն և ասէ, թէ «Քահանայքն զիմ որդին չեն թաղեր. երթիցուք ես և դու թաղեսցուք» : Ասէ (Բուրդէլ) թէ «այդ անհնար է» : Պատասխանեալ ասէ, «Վասն էր այն օրն տրտնջեցեր. երբ որ առանց քահանայի չէ մեք կարեր լինել, վասն այսորիկ պատուել պարտ է զքահանայն, զի միջնորդ է ընդ Տեառն և ընդ մարդ, թէ մեծ և թէ փոքր, թէ քահանայ և թէ վարդապետ» :

Յառաջգիր. Նձե.

## ՕՐԻՆԱԿ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

Վարդապետ մի գանգատէր մօտ իշխանին Բուրդէլի, թէ յոյժ համբերող է. ասաց. «գնացէք բերէք զի փորձեմ» : Այժմ ի դուռն երեկ (եկն), ասէ «Ի բաց երթ յիմար դու և գէթ» : Եւ նա լռութեամբ ի բաց գնաց : Դարձեալ ասէ, «Եկ վարդապետ», և դարձաւ առ իշխանն : Այս երեք անգամ արար՝ և դարձեալ գայր : Կոչեաց մօտ իւր, և ասաց թէ «Վարդապետ, այդ համբերութիւնդ ուստի ուսար» : Ասաց թէ՝ ի շանէն. զի յորժամ կոչեն՝ գայ, և յորժամ վարեն՝ երթայ. այլա գրոց շատ բան կայ, որ ի գործ դնել չեմ ածեր : Եւ պարոնն յոյժ հիացաւ, և պատուեաց զնա ըստ արժանեացն :

Անդ. Նձգ :

---

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### ՂԵՐՈՒԲՆԱ ԵԴԵՍԱՑԻ

Քրիստոնէութեան առաջին դարու և Աբգարու Հայոց թագաւորի ատենադպիր հռչակաւոր հեղինակին անուամբն համառօտ երկասիրութիւն մի է, որոյ մէջ կը պատմուի Աբգարու դարձը և Թադէոսի առաքելոյ քարոզութիւնները, որոյ անունը կը յիշատակէ Խորենացին իւր պատմութեան մէջ : Առաջին անգամ հանդերձ ծանօթութեամբք ի լոյս ընծայուեցաւ հայերէն բնագիրը սուրբ Աթոռոյս տպարանէն, և մօտերս ի վաճառ կը դրուի :

### ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂՈՒԱՆԻՑ

Համառօտ պատմութիւն մի է ութեւտասաներորդ դարու, յորում կը խօսի նոյն ժամանակին հանդիպած պատերազմներուն, Պարսից, Օսմանցւոց Ռուսաց և Աղուանից մէջ եղած քաղաքական դէպքերու վրայ : Հեղինակն է Եսայի Հասան Ջալալեանց՝ Մետրապոլիտ կամ Կաթուղիկոս տանըն Աղուանից :